

*Հայաստանեան նկարներու
ներկայացում*

Präsentation von
Armenien-Fotos



*Անթուանէթ Ունանեան իր
Հայաստանեան պտոյտի նկարները
23 Սեպտեմբերին ներկայացուց:
Շրջապտոյտը 2005 Մայիսին տեղի
ունեցաւ: Նկարները Երեւան,
Էջմիածին, Արարատեան Դաշտ,
Արենի, Սիւնիկ, Կապան, Գորիս,
Ստեփանակերտ, Շուշի,
Մարտակերտ, Գիւմրի, Վանաձոր կը
բովանդակեն:*

Antoinette Unanyan präsentierte am 23. September ihre Armenien-Reise in Bildern. Die Reise fand im Mai 2005 statt. Die Fotoaufnahmen sind von Yerevan, Etschmiazin, Araratyan Daschd, Areni, Sünik, Kaban, Goris, Stepanakert, Schuschi, Mardakert, Gümri, Vanazor.



Դասախօսական շարք



*Ցեղասպանութեան վկայութեան
ընկերութիւնը աշնան մեր սրահը
հայերուն և հայկական
ցեղասպանութեան մասին
դասախօսութիւն մը տուաւ: Այս
անգամուան նիւթն էր՝ հայերը
1920էն մինչև 1980 Թուրքիոյ մէջ:
Վիեննայի համալսարանի
դասախօսներ և ուսանողներ ներկայ
էին: Դասախօսն էր՝ Մարթին
Պիզնաու: Անոնք հետոյ Մխիթարեան
թանգարանն ալ այցելեցին:*



Vortragsreihe



Die Gesellschaft für die Dokumentation von Völkermorden hat ein Vortrag im Herbst über Armenier und dem Genozid an den Armeniern in unserem Saal gehalten. Der Vortragende war Martin Bitchnau. Das Thema dieser Vortragsreihe war Armenier in der Türkei in der Zeit zwischen 1920 und 1980. Anwesend waren die Studenten und Professoren der Universität Wien und sie besuchten auch nachher das Museum der Mechitharisten in Wien.

<http://www.voelkermord.at>



Ծննդեան Համերգ

Adventkonzert



Մխիթարեան Սանուց Միութեան կազմակերպութեամբ, Շաբաթ 2 Դեկտեմբերին Մխիթարեաններու Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ համերգ նուիրուած Ս. Ծննդեան շաբաթներուն: Աւստրիոյ մէջ գեղեցիկ սովորութիւն է նախածննդեան չորս շաբաթները սօնել Յիսուս Քրիստոսի խորհուրդով:

Համերգին կը մասնակցէին՝ Տիք. Անիթա Պիլալեան-Էվանցին՝ Սոբրան, Տիկ. Քաթարինա Պլասնիկ՝ տաւիդ, Պր. Մարթին Էվանցին՝ թաւջութակ: Բոլոր երգերը նուիրուած էին Ս. Ծննունդին ու նաև Ս. Աստուածածինին: Ունկնդիրները հմայուած լսեցին երեք հոգևոր Աւէ Մարիա-ներ՝ Շարլ Կունոյէն, Ճուլիո

Քաչչինիէ և Ֆրանց Շուպերթէն: Անթոնիօ Վիվալտիի՝ Domine Deus Gloria-ն, Հէնտրլի դուստր Միոնր ոգևորեցին ներկաները: Լսեցինք նաև ավստրիական ծննդեան մեղեդիներ, որոնք Ծննդեան ամսու խորհրդանիշերն են: Հայկական երաժիշտներու գործերով փակուեցաւ համերգը՝ Ալեշահի «Բուխերիկ»ը և Բարսեղ Կանաչեանի «Օրօր»ը մեզ առաջնորդեցին դէպի հայրենի աշխարհ: Երեք երաժիշտներն ալ իրենց յատուկ մասնագիտութեամբ խանդավառեցին ներկաները:

Գրիգոր Հալաճեան

Ծննդեան Հասերգ

Adventkonzert



Freunde der Mechitaristen haben am Samstag den 2. Dezember in der Mechitaristenkirche zu Maria Schutz ein Adventkonzert organisiert. Die Musiker waren Fr. Anita Bilalyan-Evanzin Sopran, Fr. Katarina Blassnigg Harfe und Hr. Martin Evanzin Cello. Alle Lieder waren Weihnachten und der Mutter Gottes Maria gewidmet. Es

waren geistliche Werke von Vivaldi, Mozart, Ave Maria von Gounod, Caccini und Schubert, Tochter Zion von Händel, Puchurig von Aelemschach und Oror von Ganatchian und weitere volkstümliche Adventlieder;. Anwesend waren über sechzig Personen. Es war ein besinnlicher Abend für uns alle und die anwesenden waren sehr erfreut.

